ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հոկտեմբերի 1-ին, կիրակի.—Տոն է Վարագայ Սրբոյ Խաչի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

**Հոկտեմբերի 8-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Բագրատ արք. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

**Հոկտեմբերի 15-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բոստոնի Ս. Ստեփանոս եկեղեցու հովիվ Տ. Թորգոմ ավ. քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը.

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

**Հոկտեմբերի 22-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անանիա եպս. Արաբաջյանը: Ս. պատարագի ընթացքում կատարվեց սարկավագական ձեռնադրություն, որից հետո Վեհափառ Հայրապետը հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

**Հոկտեմբերի 29-ին, կիրակի.—Գյուտ Խաչ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կարապետ արք. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Նոյեմբերի 5-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ վրդ. Չուլջյանը և «Հայր մեր»-ից առաջ համգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

**Նոյեմբերի 12-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Առողիկ եպս. Արիստակեսյանը: Ս. պատարագի ընթացքում կատարվեց չորս սարկավագների քահանայական ձեռնադրություն, որի ավարտին շնորհավորանքի խոսք ասաց Վեհափառ Հայրապետը (տես էջ 72): Իսկ երեկոյան ժամերգությունից հետո կատարվեց երեք նորընծա քահանաների վեղարի տվչությունը՝ ձեռամբ Տ. Առողիկ եպս. Արիստակեսյանի:

* * *

**Նոյեմբերի 19-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

**Նոյեմբերի 26-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

**Դեկտեմբերի 2-ին, շաբաթ.—Տոն Սրբոց Առաքելոցն և առաջին լուսավորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Բագրատ աբղ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

**Դեկտեմբերի 3-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ֆրեզնոյի հայոց հոգևոր հովիվ Տ. Սասուն վրդ. Զմրուխտյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

**Դեկտեմբերի 10-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Դեկտեմբերի 17-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ վրդ. Չուլջյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

*
* *

**Դեկտեմբերի 24-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անուշավան աբղ. Ժամկոչյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Դեկտեմբերի 25-ին, երկուշաբթի.—Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին:**

Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփանոս նախավկայի խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

